

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

A 18.00.01  
A Դ - 25

Ուսնաձեռնի ԳԱՎԻԹ ՎԱՐՈՒԺԱՆԻ

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱԿՈՒՄՔԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ  
ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԺԸ.00.01 «ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ  
ճարտարապետության քեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂԱՍԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2005

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ  
И СТРОИТЕЛЬСТВА

РАФАЕЛЯН ДАВИД ВАРУЖАНОВИЧ

АРХИТЕКТУРНОЕ НАСЛЕДИЕ КЛУБНЫХ ЗДАНИЙ И ДВОРЦОВ  
КУЛЬТУРЫ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по  
специальности 18.00.01 – “Архитектура”

ЕРЕВАН – 2005

Ատենախոսության բեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

ճարտ. դոկտոր, պրոֆեսոր  
Դ.Գ. Քերթմեճյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ճարտ. դոկտոր  
Մ.Ա. Գասպարյան

ճարտ. բեկնածու, դոցենտ  
Լ.Վ. Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ Քաղաքաշինության  
նախարարության  
ճարտարապետության ազգային  
բանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2005թ. ապրիլի 13-ին ժամը 14:00-ին, ԵՃՇՊՀ-ում գործող 029 մասնագիտական խորհրդում, հետևյալ հասցեով՝ 375009, ք. Երևան, Տերյան փ., 105

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՃՇՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առավաճ է 2005թ. մարտի 12-ին:

029 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
ճարտ. բեկնածու, դոցենտ

S.U. Բարսեղյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства

Научный руководитель:

доктор архитектуры, профессор  
Кертменджян Д.Г.

Официальные оппоненты:

доктор архитектуры  
Гаспарян М.А.

кандидат архитектуры, доцент  
Киракосян Л.В.

Ведущая организация:

Национальный музей-институт  
архитектуры Министерства  
градоостроительства Республики  
Армения

Защита состоится 13 апреля 2005г. в 14:00 часов на заседании специализированного совета 029 при ЕГУАС, по адресу: 375009, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУАС.  
Автореферат разослан 12 марта 2005г.

Ученый секретарь  
специализированного совета  
кандидат архитектуры, доцент

Барсегян Т.С.

1184-2005

### ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետական ժառանգությունը վիթխարի հարստություն է: Այն, խորհրդահայ ճարտարապետության մեջ արտահայտվելով բազմազան և արգասաբեր, ըստ էության պատկերում է հայ ժողովրդի արվեստասիրական ոգին և իդեալները: Որքան էլ որ ժամանակներն ու կենցաղը փոխվում են, միևնույն է՝ տվյալ բնագավառը մնում է անփոփոխ և առավել անհրաժեշտ սերունդների արդիական դաստիարակության համար:

**Ատենախոսության բեման** ի մի է բերում խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետությունը: Փորձ է արվում ըստ էության վերլուծել դրանց բովանդակությունն ու գաղափարական հենքը, որպեսզի հնարավոր լինի պահպանել այդ ազգային ճարտարապետական և մշակութային հարստությունը՝ հարմարեցնելով դրանք կյանքի ժամանակակից պահանջներին:

**Ուսումնասիրության առարկան** Խորհրդային Հայաստանի մեծ ու փոքր բնակավայրերում եղած ակումբային շենքերի և մշակույթի պալատների փաստագրական-վերլուծական հետազոտումն է: Այդ կենտրոններում առկա արածքների՝ դիտադահլիճների, տարատեսակ միջոցառումների համար հարմարեցված ակումբային սենյակների, սպորտային կառույցների, գրադարանների և այլ տարածքների տիպաբանական, հորինվածքային ճանաչողական մեկնաբանությունն ու բնութագրումն է:

**Ուսումնասիրության հրատապությունը:** Խորհրդահայ ակումբային շենքերն ու մշակույթի պալատները հասարակական բազմաբնույթ համալիրներ են: Դրանք, ոչ միայն ճարտարապետական կարևոր նմուշներ են, այլև՝ ազգային նյութական հարստություն: Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած նյութական դժվարին պայմանները մեծ վնաս պատճառեցին այդ համալիրներին: Ակնհայտ է, որ ակումբային շենքերի և մշակույթի պալատների պահպանությունն ու արդիականացումը Հայաստանի Հանրապետության մշակույթի զարգացման գործում նյութական և բարոյական մեծ դեր կունենան: Այսօր անհետաձգելի է դրանց պահպանման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը և որոնք էլ պետք է հաջորդեն այդ համալիրների հարմարեցումը արդի պայմաններին: Այսպիսով, կարելի է ասել, որ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետական ուսումնասիրությունը մշակույթի ոլորտում օրակարգի խնդիր է:

**Ուսումնասիրության սահմանները:** Աշխատությունում ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող խնդրառարկա շենքերը: Ատենախոսության մեջ չեն քննարկվում հայկական սփյուռքի գաղթօջախներում եղած բազմաթիվ ակումբային շենքերը: Դրանց մասին ներկայացվել են միայն որոշ ակնարկային տեղեկություններ, փորձելով բացահայտել կառույցի տիպի համազգային բնույթի բնորոշման ապագա հեռանկարները: Նույն դատողությունը պետք է կատարել ուսումնասիրության պատմական սահմանների վերաբերյալ: Արդարև, ակումբային շենքերն ու մշակույթի պալատները հայկական իրականությունում գործում են սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից: Տվյալ աշխատությունում ընդգրկվում են դրանց միայն խորհրդահայ ժամանակաշրջանի՝ 1920-1991 թթ., օրինակները:

**Ուսումնասիրության նպատակն է՝** Խորհրդային Հայաստանի ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետական համակ ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

- 1) խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ցուցակագրումն ու դրանց տիպավորումը,
- 2) տիպավորված կառույցների խորհրդային ճարտարապետության պարբերացման հիմքերով խմբավորումը,
- 3) խմբավորված կառույցներից կարևորագույն նմուշների ընտրությունն ու փաստագրական վերուծությունը,
- 4) փաստագրված հուշարձանների տիպաբանական, հորինվածքային և ոճական առանձնահատկությունների բնութագրումը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնվում է հետևյալ գիտահետազոտական հաջորդականության վրա: ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, տարբեր նախարարությունների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ու արխիվային ցուցակների, ինչպես նաև տեղում փաստացի գոյություն ունեցող խնդր առարկա կառույցների հիման վրա կազմվել են ուսումնասիրվող շենքերի հնարավորին ամբողջական ցուցակները: Դրանք համակարգվել են ըստ տիպաբանական պատկանելության և խորհրդային ճարտարապետության զարգացման փուլերի՝ համապատասխանաբար բաժանվելով հետևյալ երեք խմբերի՝ ա) կազմավորման ժամանակաշրջան՝ 1920-32թթ., բ) հաստատման ժամանակաշրջան՝ 1932-1955թթ., և գ) ծավալման ժամանակաշրջան՝ 1955-1991թթ.:

Նկատի ունենալով քննակվող շենքերի մեծ քանակությունը՝ դրանց ուսումնասիրության համար ամեն մի տիպից ընտրվել է մեկական օրինակ: Ընտրված հուշարձանների փաստագրական վերուծությունը կատարվել է ըստ բովանդակ շենքերի ու դրանցով կազմված համախորհրդային տիպաբանական, հորինվածքային (ներդաշնակեցման միջոցներ, հատկանիշներ, օրինաչափություններ), իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կոմստրուկտիվ ու դետալային առանձնահատկությունների: Պարբերաբար և համեմատական կարգով մեկնաբանվել են Խորհրդային Հայաստանի ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետության ոճական առանձնահատկությունները:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Ատենախոսությունն առաջին աշխատությունն է, որը համակ հետազոտության առարկա է դարձնում Խորհրդային Հայաստանի ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետության ուսումնասիրությունը: Շենքերի ուսումնասիրությունը կատարվել է տեղում՝ զննման եղանակով, և արդյունքում աշխատության մեջ առաջին անգամ ընդգրկվել են մի շարք ակումբային շենքերի և մշակույթի պալատների չափագրությունները և դրանք մտցվել են շրջանառության մեջ:

Ուսումնասիրության ներդրումը կատարվել է հողվածների և գիտական քեզերի ձևով: Փաստորեն, ներկայումս ակումբային շենքերի ու մշակույթի պալատների նորովի պահանջներով օգտագործումը մեծ կարևորություն և ֆինանսական շահավետություն ունի: Այդ կապակցությամբ, տվյալ թեման շահագրգռում է հասարակական և պետական բազմաթիվ հաստատություններին, դրանցից հատկապես նշելի են տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, Կրթության և գիտության նախարարությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային առյանները, Լիցիի և Հայաստանում գործող այլ հիմնադրամներն ու նրանց հարակից հաստատությունները և այլն:

Ուսումնասիրությունում սկզբունքային պաշտպանության տակ է վերցվում խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների պահպանությունն ու նրանց ժամանակակից օգտագործման հնարավորությունների ստեղծումը:

Հարցի ուսումնասիրությունն ու գոյություն ունեցող գրականության քննական տեսությունը և ուսումնասիրության հիմնական աղբյուրները: Ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետությանն ու դրանց նախագծման հարցերին անդրադարձել են մի շարք հեղինակներ և քննարկվող բնագավառի նեղ մասնագետներ: Գոյություն ունեցող աշխատությունների մի մասը նվիրված է ակումբային շենքերի և մշակույթի պալատների անմիջական հետազոտությանը, իսկ մյուս մասում ընդհանուր առմամբ ուսումնասիրվել է Խորհրդային Միության կամ խորհրդահայ ճարտարապետությունը, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև խնդր առարկա շենքերին:

Խորհրդահայ ակումբային շենքերին ու մշակույթի պալատներին անմիջականորեն նվիրված է միայն մեկ ուսումնասիրություն՝ Ն.Սողոմոնյանի քեկանծուական ատենախոսությունը, «Խորհրդային Հայաստանի կոլտնտեսային ակումբային շենքերի ճարտարապետությունը» վերնագրով (ռուսերեն, 1952թ.): Փաստորեն, աշխատությունը իր բովանդակության մեջ տիպաբանական սահմանափակություն ունի և ժամանակագրական առումով վերաբերում է մինչև 1950թ.:

Խորհրդային Միության և խորհրդահայ հանրեղիանուր ճարտարապետության ենթատեքստով աշխատությունների կազմում ակումբային շենքերին և մշակույթի պալատներին անդրադարձող աշխատությունները թվով անհամեմատ ավելի են: Դրանք բաժանվում են պատմաարվեստաբանական և տիպաբանական հետազոտությունների: Առաջին խմբի աշխատություններից է Ստ.Մնացականյանի «Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը» (1956թ.) գիրքը: Մի շարք գյուղական շենքերի շարքում հեղինակը կանգ է առնում նաև գյուղական ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետական զարգացմանն ու համակարգված բնութագրմանը: Փաստորեն, Ստ.Մնացականյանի աշխատությունը լավագույն դեպքում ընդարձակում է Ն.Սողոմոնյանի ատենախոսությունը, մնալով մինչև 1950թ. սահմաններում: Նույնը պետք է ասել Վ.Մ.Հարությունյանի և Կ.Լ.Հովհաննիսյանի «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (ռուսերեն, 1955թ.) աշխատության մասին, մի տարբերությամբ, որ այստեղ ընդգրկվել են նաև մի քանի քաղաքային օրինակներ և: Ակումբների մասին ավելի սակավ նյութ են բովանդակում ակադեմիական «Ալնարկ հայ ճարտարապետության պատմություն», (1964թ.), Ա.Գրիգորյանի և Մ.Թովմասյանի «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (ռուսերեն, 1985թ.), Կ.Բալայանի «Հայ ազգային ժամանակակից ճարտարապետությունը» (ռուսերեն, 1987թ.) և այլ հրատարակություններ: Խնդր առարկա շենքերին վերաբերող աշխատություններից են նաև Հայաստանի ճարտարապետների միության համագումարների կապակցությամբ հրատարակված հաշվետվությունները, ինչպես նաև Հանրեղիանուր ճարտարապետության պատմության 12 հատորյակի 11-12 -րդ (Բ) հատորներում ամփոփված նյութերը (ռուսերեն, 1978թ.) և նրանց զուգահեռները այդ թվում՝ Խորհրդային ճարտարապետության պատմության երկհատորյակը (ռուսերեն, 1985թ.) և այլ բազմաթիվ աշխատություններ: Ակումբային շենքերի վերաբերյալ ունեցած իրենց տեղեկություններով տարբերվում են Լ.Դուրխանյանի «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը 20-ական քվականներին» (ռուսերեն, 1980թ.) և «Նիկոլայոս Բունիաթյան» (1990թ.)

աշխատությունները, ինչպես նաև պրոֆեսոր Է.Ա.Տիգրանյանի «Խորհրդային Հայաստանի հասարակական շենքերի ճարտարապետության հիմնադրումն ու զարգացումը» 1920-1980թթ. վերաբերող դոկտորական ատենախոսությունը (ռուսերեն, 1982թ.) և այլն: Վերջին երկու հեղինակների աշխատություններն էլ բավականին շահեկան նյութ են բովանդակում ակումբային շենքերի մասին: Լ.Դոլոխանյանի աշխատությունը, լինելով հակիրճ, այնուամենայնիվ 1920-ական թվականների Խորհրդային Հայաստանի ճարտարապետության բացահայտման մեջ կարևոր ավանդ է ներդրում: Է.Ա.Տիգրանյանի աշխատության տեղեկություններն ու գրաֆիկական նյութերը ընդգրկում են մինչև 1970-ական թվականների ավարտը: Չնայած աշխատության համընդհանուր բնույթին և ակումբների մասին տրված ոչ ամբողջական տեղեկություններին՝ այն մեծ ներդրում է բնագավառի ուսումնասիրության մեջ, մանավանդ, որ հեղինակը հայկական դիտադաշինային և թատերական շենքերի լավագույն գիտակներից մեկն է եղել: Փաստորեն, Է.Տիգրանյանի ուսումնասիրությունն ընդգրկում է խնդրո առարկա կառույցների 7-8 օրինակներ:

Ատենախոսության մեջ կառուցողաբար ընդգրկվել են նշված հեղինակների ներդրումները, դրանք ամբողջացվել են և ինտեգրացվել՝ մասնագիտական լրացուցիչ բնագավառների տեղեկություններով: Ատենախոսության ուսումնասիրությունների համար օգտագործվել են զանազան արխիվային նյութեր, նախագծային ֆոնդեր, տիպաբանական և այլ մասնագիտական աշխատություններ: Ակումբային շենքերի և մշակույթի պալատների ցուցակները կազմելու կապակցությամբ օգտագործվել են ՀՀ Քաղաքաշինության, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների համապատասխան բնակավայրերի ցուցակները, դրանք ամբողջացվել են ՀՀ պետական արխիվի, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության արխիվի ցուցակներով և պետական նախագծային հաստատությունների տվյալներով: Աշխատությունում առանձնապես կարևորվել է ոչ միայն ընդգրկված կառույցների տեղում հետազոտությունը, այլ նաև դրանց նախագծային փաթեթների ուսումնասիրությունը: Այդ կապակցությամբ աշխատանքները կատարվել են ՀՀ ազգային արխիվ՝ Ֆոնդ 6-«Հայդումեմտնախագիծ» և Ֆոնդ 29-«Հայարդնախագիծ», Ալեքսանդր Թամանյանի քանդաքանի արխիվ՝ քղբապանակ 81, Հայարդնախագիծ ինստիտուտի արխիվ: Նշվածներին ավելացվել են անհատ ճարտարապետների անձնական արխիվային նյութերը, այդ թվում՝ Պ.Մարգարյանի, Տ.Մարությանի, Ս.Մամուկյանի, Է.Ա.Տիգրանյանի արխիվները և այլն: Դրանք հավաք կերպով մեծ ներդրում տվեցին աշխատության նորույթը կայացնելու գործում:

Հավաքված նյութերը հարստացվել են մի շարք տիպաբանական բնույթի աշխատություններով, որոնք օգնել են համեմատական ուսումնասիրությունների, դասակարգումների և մեկնաբանությունների ռացիոնալությանը, այդ թվում են՝ Վ.Է.Բիկովի և հեղինակային խմբի «Ավանային և գյուղական ակումբների նախագծման նորմեր» (ռուսերեն, 1958թ.), Վ.Լ.Կուլագայի «Ունիվերսալ դաշիններով ակումբներ» (ռուսերեն, 1958թ.), Գ.Վ.Ջենկովիչի «Գյուղական ակումբների ճարտարապետությունը» (ռուսերեն, 1980թ.), Տիպային նախագծերի կատալոգ 224-Տ-Ի.83 (1983թ.), Է.Շիլովայի «Գյուղական ակումբային և սպորտային շենքերը» (ռուսերեն, 1987թ.), Է.Ա.Տիգրանյանի «Հասարակական շենքերի և կառուցվածքների ճարտարապետական նախագծման հիմունքները» (1989թ.) և այլն:

Խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետությունն իր զարգացման ընթացքով որոշիչ դեր կատարեց հայկական արդի ճարտարապետության ձևավորման գործում: Այն բարեփոխվեց 1920-32թթ. կոնստրուկտիվիստական որոնումներից դեպի 1932-55թթ. պատմական ազգային գաղափարի ռոմանտիզմի միտումները և արդյունքում՝ հաջորդ տասնամյակներում, բյուրեղացավ որպես ազգային արդի դպրոց: Նշվածները հաջորդաբար իրենց կարևորագույն հուշարձաններով ուսումնասիրվել են ստորև ամփոփված երեք գլուխներում:

**Գ.ԼՈՒՒՍ ԱՌԱՋԻՆ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՑԱՆԿԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՈՒ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ 1920-1932 ԹԹ.**

Խորհրդահայ ակումբային շենքերը և մշակույթի պալատները սոցիալիստական հասարակարգին բնորոշ կառույցներ են և տիպաբանականորեն պատկանում են հասարակական շենքերի մշակութային կառույցների խմբին, որոնք սոցիալիստական իրականության մեջ մեկնաբանվեցին որպես դիտադաշինային կորիզի շուրջ զարգացող համակառույցներ: Ակումբային շենքերի և մշակույթի պալատների ուսումնասիրությունը օբյեկտիվորեն կատարելու համար գլխի սկզբում՝ ակնարկային կարգով, անրադարձ է կատարվում շենքի տիպի կազմավորմանը: Այն համաշխարհային իրականությունում հասարակական շփումների ու ժամանցի համար նախատեսվող հասարակական շենքի տիպ էր, որն ամբողջապես նոր՝ ժողովրդական, զաղափարական դաստիարակման, մեկնաբանություն ստացավ խորհրդային հասարակարգում: Դրանք, իրենց որոշակի նորմատիվներով ու գաղափարներով, տիպավորվեցին և նախագծային հիմնավորում ստացան խորհրդային տարիների ողջ իրականության մեջ: Խորհրդահայ բազմաթիվ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ուսումնասիրությանը ռացիոնալ ընթացք տալու համար դրանք ատենախոսության սույն գլխում առաջին հերթին ցանկավորվել են: Չունենալով խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ամբողջական ցանկը՝ ատենախոսության մեջ ուսումնասիրվել են զանազան ֆոնդերում և արխիվներում գոյություն ունեցող ցանկերը և փոխադարձաբար լրացվել են դրանք: Խնդրո առարկա շենքերի ցանկերը (տեքստը չձանրարեմունտ համար) ատենախոսությունում ներկայացվել են հավելվածի տեսքով: Խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ցանկերը համեմատական կարգով տարբերակվել են ըստ ժամանակի գոյություն ունեցող տեսական դրույթների: Այդ դրույթները բաղվել են խորհրդային ճարտարապետության համապատասխան տիպաբանության աշխատություններից և տիպային նախագծման ֆոնդերից: Դրանց հիման վրա խնդրո առարկա շենքերը ատենախոսությունում և տեսական աղյուսակում (տես՝ աղյուսակ 1) համակարգվել են իրար հետ փոխկապակցված չորս ասպեկտներով: դրանք են՝ 1) համալիրի հատակագծային տարածական հորինվածքային կարգը, 2) դիտադաշինի տարողությունը, 3) դիտադաշինի դասավորությունը ընդհանուր հորինվածքի կազմում և 4) բնակավայրի տեսակը:

1) Ակումբային շենքերի և մշակույթի պալատների հորինվածքային կարգը (Հ պայամանական տառով) բաժանվել է ծավալատարածական հորինվածքի տեսության սկզբունքներով: Դրանք աղյուսակում արտահայտված են որպես

Հ1-ուղղանկյուն, Հ2-անկյունարդածև, Հ3- տավրածև, Հ4-տաշտածև, Հ5-ուղղանկյուն ներքին բակով, Հ6-ազատ դասավորությամբ:

2) Ըստ դիտադահլիճի տարրության, ակունքներն ու մշակույթի պալատները բաժանվում են՝ 100-400 (գյուղական ակունք), 300-700 (գյուղական մշակույթի պալատ և քաղաքային ակունք), 500-800 (շրջկենտրոնի մշակույթի պալատ) և 600-1000 (քաղաքային մշակույթի պալատ) տեղերի:

3) Համապատասխանաբար նշված դահլիճները տարբերակային սկզբունքով տեղաբաշխվում են նշված հորինվածքային կարգերում և դասակարգվում՝ հետևյալ տեսակների՝ Լ-լայնական առանցքի վրա տեղադրությամբ, Ե-երկայնական առանցքի վրա տեղադրությամբ, Ա-առանցքային տեղադրությամբ և նրա մասնավոր դեպքը հանդիսացող անկյունագծային առանցքով կատարված տեղադրությամբ:

4) Քաղաքաշինական միջավայրի կարգով (Տ) տեսական աղյուսակի վերևում տեսակավորված ակունքային շենքերն ու մշակույթի պալատները դասակարգվում են հետևյալ տարբերակների՝ Տ1 և Տ2 - գյուղական, Տ3- քաղաքային կամ ավանային, Տ4 և Տ5 - քաղաքային: Տվյալ տարբերակային ուսումնասիրության հիմքը կազմում է նաև ակունքային շենքերի և մշակույթի պալատների բովանդակ տարածքների ֆունկցիոնալ պատկանելությունը: Դրանք են՝ Նախասրահ-հանդերձարանը, դիտադահլիճը, վարչական և ակունքային մասերը, սպորտային դահլիճը՝ իր օժանդակ մասերով: Խորհրդային ակունքների ստերիոտիպերով ստեղծված վերոհիշյալ դասակարգումը այն էտալոնն է, որի լույսի ներքո տվյալ գլխում կատարվում է խորհրդահայ ակունքային շենքերի առաջին օրինակների (1920-1932թթ.) փաստագրավերլուծական ուսումնասիրությունը: Այդ կապակցությամբ, ինչպես առաջին, այնպես էլ մյուս գլուխներում, հստակության սկզբունքներից ելնելով, ակունքային շենքերի ուսումնասիրությունը կատարվել է ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի: Դրանք իրենց հերթին բաժանվել են ըստ անհատական և տիպային նախագծերի: Այս ժամանակաշրջանից ընտրված և փաստագրական վերլուծության ենթարկված հուշարձաններն են՝ Կոտուհարների միության ակունքը (ճարտ.՝ Ն.Բունիաթյան, Երևան, 1920-ական թթ. երկրորդ կես), «Պիչչեվկուս» միության Տոմսկու անվան ակունքի նախագիծը (ճարտ. Ն.Բունիաթյան, 1920-ական թվականներ), Ն.Բունիաթյանի՝ Շինարարների միության շենքի մրցույթին ներկայացված ակունքի նախագիծը և Շինարարների ակունքի կառուցված շենքը (ճարտարապետներ՝ Կ.Հալաբյան, Գ.Բոչար, Մ.Մազմանյան, ստեղծագործական խմբի կողմից, Երևան, 1928թ.): Երևանի ակունքային շենքերից բացի, լայն շինարարություն է ծավալվում նաև հանրապետության երկրորդ քաղաքում՝ Գյումրիում: Ուսումնասիրված շենքերի թվում են՝ Սևոյանի անվան երկաթուղայինների ակունքը (1929թ.), Հայտերստիլի ֆաբրիկայի ակունքը՝ նախագծային առաջարկով (ճարտ.՝ Ա.Ղուզանյան, 1929թ.) և իրականացված տարբերակով (ճարտ.՝ Գ.Բոչար, 1930թ.): Մեծ քաղաքների կողքին ակունքների շինարարության առաջին ակունքները ծավալվում են նաև Հայաստանի շրջկենտրոններում: Դրանք բազմաթիվ են, բայց առենախտության այս մասում ընդգրկվել են Արթիկի և Կապանի շրջկենտրոնների ակունքները և այլն: Հարկ է նշել, որ այս փուլի ակունքային շենքերի և մշակույթի պալատների փաստագրական տվյալների հավաքի գործընթացում, տեղանքում կատարված լուսանկարչական աշխատանքների հետ մեկտեղ, մեր կողմից չափագրվել և լրացվել են՝ Գյումրիի Սևոյանի անվան երկաթուղայինների ակունքը և Հայտերստիլ ֆաբրիկայի մշակույթի պալատը, Երևանի Շինարարների (այժմ

Սպորտ կոմիտեի շենքը, որի մի թևը ներկայումս վերափոխվում է բնակելի բազմահարկի) ակունքը:

1920-1932թթ. ակունքային շենքերի բովանդակության և կերպարային խնդիրների որոնումների ժամանակաշրջան էր: Գոյություն ունեցող շենքերին և նախագծերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

• Հատակագծային լուծումներում ակունքային շենքերը հիմնականում տարանջատվել են երկու՝ իրարից անկախ գործող, դահլիճային և ակունքային մասերի:

• Առանցքային լուծումները մեծ ակունքների դեպքում հիմնականում ասիմետրիկ են, մինչդեռ փոքր և միջին ակունքները բացարձակապես սիմետրիկ են՝ լինի դա երկայնական, թե անկյունագծային առանցքներով:

• Ծավալատարածական լուծումները տվյալ փուլի հետազոտված շենքերի հատակագծային հորինվածքի պարագծերում կամ ճակատների մակերևույթների պլաստիկայով կտրտված են և պարզ չեն: Աստիճանաբար տվյալ հանգամանքը հաղթահարվում է և շենքերում տեղ է գտնում կողային՝ ակունքային սենյակներով և կենտրոնական՝ առաջին հարկի մակարդակով, մուտք ունեցող դիտադահլիճները: 1930-ական թվականներին կառուցված ակունքները իրենց ծավալատարածական հորինվածքում պարզ են և պլաստոնական: Վերջինս զուգահեռում էր խորհրդային պրակտիկան և այն իր լուծումներով ճանապարհ հարբեց ակունքների երկմաս բաժանումով տիպի կայացմանը:

• Ակունքային շենքերը բաժանվում են քաղաքային և գյուղական բնակավայրերի համար նախագծված տարբերակների: Նրանք ճարտարապետության և մասշտաբներով իրարից տարբեր են: Բացահայտորեն քաղաքային ակունքները կառուցվել են կոնստրուկտիվիստական ոճով և հիմնականում միջին տարողությամբ են: Գյուղական ակունքները այս շրջանում քիչ են: Դրանք հիմնականում փոքր տարողությամբ և ավանդական սկզբունքներով են:

• Ծավալատարածական հորինվածքով այս ժամանակների ակունքները հիմնականում բաժանելի են՝ բլոկացված (հոծ) և բակային լուծումների: Փաստորեն, մեծ ակունքները, ունենալով նաև սննդի սպասարկման և սպորտային մասեր, նրանցում նախընտրելի է դառնում բակային լուծումը, իսկ մյուսներում անխտրաբար կիրառվել է համակառույցի բլոկացված՝ երկայնական կամ անկյունային առանցքով, դասավորությունները: Ներդաշնակեցման առումով հորինվածքի կենտրոնն ու դոմինանտը մարմնավորվել են դահլիճի և նախասրահի ծավալներով: Ակունքային սենյակները, կերպարային խնդիրներից ելնելով, անմիջապես արտահայտվել են ճակատներում և ստեղծել՝ համակառույցի ենթատեքստը:

• Ծավալատարածական հատկանիշներն ու շինարվեստը քաղաքային ակունքներում թելադրվել են երկաթբետոնյա ճարտարապետությամբ կամ երկաթբետոնյա միջուկի շուրջ կատարված քարե երեսապատմամբ: Մինչդեռ, գյուղական ակունքները, լինելով ժառանգորդական, առանց բացառության քարաշեն են՝ ընդգծված ճակատներով:

• Մասշտաբային և մասնահատման առումով բոլոր ակունքներն էլ հերոսական են, մասնավորապես որ դրանցում ընդգծված է մուտքային հանգույցի մոնումենտալությունը և հաճախակի են այս նպատակներով աստիճանավանդակների ու բեմական տուփերի ընդգծումը ծավալատարածական հորինվածքում: Մասնահատումները տարբեր են, լինելով ուղղածիզ՝ մետրիկ, իսկ

հարկերի բաժանիչ գծերում՝ հորիզոնական: Շատ հաճախ քաղաքային ակումբներում կիրառվել են բացվածքների միջոցով կատարվող խառը մասնահատումների օրինակներ ևս:

• Ինչպես ողջ Խորհրդային միությունում, այնպես էլ խորհրդահայ իրականությունում 1920-ական թվականները հանդիսացան ակումբային շենքերի հետագա տարիների զարգացման պատվանդանը:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԽՈՐՀՐԴԱՎԱՅ ԱՎՈՒՄԲԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1932-1955թթ.**

1932-1955թթ. խորհրդահայ ճարտարապետության համար ազգային ճարտարապետության ինքնորոշման և հաստատման փուլն են: Այս ժամանակաշրջանի ճարտարապետության կատարելագործման գործընթացում իրենց մեծ նշանակությունը ունեցան ակումբային շենքերն ու հատկապես նորաստեղծ մշակույթի պալատները: Փաստորեն, այս տարիների բնակելի ու արդյունաբերական ճարտարապետական ուղղությունները (տնտեսավետության խնդիրներով պայմանավորված), տատանվելով մասսայականացման ու ազգային խնդիրների միջև, արդյունքում անցում կատարեցին դեպի մասսայականացումը: Մինչդեռ, մշակույթի պալատները, ունենալով ընդգծված գաղափարական բովանդակություն և նշանակություն, դրանցում սկզբունքայնորեն և աստիճանաբար արմատավորվեց ազգայինը՝ դրսևորվելով որպես «Ազգային նոր դպրոց»: Սա ծավալատարածական ու ոճական ճանաչողաբար կատարված զարգացում էր, որը, հարմարվելով խորհրդային դեկրետներին, կարողացավ ստեղծագործական նոր վերելք ապրել: Հենց վերջինով պայմանավորված՝ այս շրջանի շենքերը ոճական խնդիրներում պյուրիստական չէին կարող լինել: Դրանցում արտահայտվեց ոճական մի այնպիսի բարդ խնդրում, որը մասնագիտական վարպետության ցուցանիշ էր և դա միայն կարելի է բնորոշել որպես խորհրդային ճարտարապետության ազգային զարթոնքի ուրույն դպրոց: Ստորև կատարվող խնդրո առարկա շենքերի բնութագրմանը վերաբերող փաստագրական վերլուծությունները նպատակային կարգով կներկայացվեն քաղաքային և գյուղական ենթաբաժանումներով: Զաղաքային ակումբներից և մշակույթի պալատներից ընդգրկվել են՝ Իջևան քաղաքի մշակույթի պալատը (ճարտարապետներ՝ Ռ.Իսրայելյան, Ա.Օհանջանյան և Ռ.Ալավերդյան, 1938թ.), Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան մշակույթի պալատը (ճարտ. Ս.Մանուկյան, 1945-1949թթ.), Աշտարակի 800 տեղանոց թատրոն-մշակույթի պալատը (ճարտ.՝ Յու.Յարալով, խորհրդատու՝ Կ.Հարաբյան, 1945-1949թթ.), Էջմիածին քաղաքի Կոստաղոսյան 17-րդ համագումարի անվան ակումբը (ճարտ. Ս.Մանուկյան, 1948թ.), Սպիտակի շաքարի գործարանի ակումբը (ճարտ. Ս.Մանուկյան, 1950թ.), Հիդրոշինարարների ակումբը Հրազդան քաղաքում (ճարտ.՝ Ս.Մարության, Հրազդան, 1949-1952թ.), Վանաձորի քիմիական գործարանի 500 տեղանոց դահլիճով ակումբը (ճարտ. Ռ.Ալավերդյան, 1952թ.), Ալավերդու պղնձի գործարանի ակումբը (1953թ.), Կանազի գործարանի մշակույթի պալատը (ճարտ.՝ Ս.Մանուկյան, 1954թ.), Ստեփանավանի մշակույթի պալատը (1955թ.), Բանաբեռ ՀԷԿ-ի ակումբը (ճարտ. Ս.Մարության, 1955թ.): Գյուղական ակումբային շենքերը և մշակույթի պալատները հիմնական եղանակ ստեղծողն էին այս փուլի ստեղծագործական զարգացման մեջ: Դրանք բազմաթիվ են և արժեքավոր ներդրումներ են հանդիսանում հայկական ճարտարապետության մեջ: Գյուղական ակումբաշինությունը Խորհրդային Հայաստանում առավել լայն զարգացում ստացավ հետպատերազմյան տարիներին, քեև դրանց առաջին օրինակները

հիմնականում 1930-ական թվականներից էին: Այդ գործընթացի ծավալումը 1945թ. կառավարական որոշման արդյունք էր, որտեղ խրախուսվում էր գյուղական ակումբային շենքերի զարգացումը: Փաստորեն, այդ կապակցությամբ հայտարարված մրցույթի հիմնական նպատակը տվյալ ասպարեզում տիպային նախագծերի ստեղծումն էր: Դրանք 100, 200, 300 տեղանոց դահլիճներով տիպերին էին պատկանում [տես՝ 20, էջ 263 հմմ.16, էջ 154]: Տվյալ ժամանակաշրջանի խորհրդահայ գյուղական ակումբները մասամբ ուսումնասիրվել են ն.Սողոմոնյանի 1952թ. պաշտպանած առենախոսությունում և Ստ. Մնացականյանի Հայաստանի գյուղական ճարտարապետության ուսումնասիրությունում: Առենախոսությունում վերջինները ներկայացվել են ընդհանրացված կարգով և վերլուծականորեն ավելացվել են միայն այն շենքերը, որոնք պետք եղած լուսաբանում չեն ստացել:

**ա) 100 տեղանոց դահլիճով ակումբները** գլխավորապես կառուցվել են փոքր գյուղերում: Դրանք սովորաբար ունեն շուրջ 40 քմ նախասրահ, 100 քմ դահլիճ, ներառյալ ամբիոնատիպ բեմական հարթակ: Հայտնի նախագծերում և պահպանված այս տիպի ակումբային շենքերում դահլիճն ունի համապատասխան կիներևակման խուց և երկու օժանդակ սենյակներ, որոնց ընդհանուր մակերեսը 50քմ է: Նշված սենյակները մեծ մասամբ նախագծվել են բազմանպատակ օգտագործման նկատառումներով, որը թելադրված էր տարածքի սահմանափակությամբ: Կառույցի հիմնական տարրը մուտքի մոնումենտալ լուծումն է: Այսպիսի լուծում ունեն Ալ.Սահինյանի Մոդովկա (Ստեփանավանի շրջան), Գոմաձոր (Սևանի շրջան) գյուղերի ակումբները: Այս տիպի ակումբների հետաքրքիր նմուշներ են Հ.Մարգարյանի կողմից նախագծված Թալինի շրջանի Վերին Սատունաշեն գյուղի ակումբը և այդ օրինակով կառուցված բազմաթիվ այլ համակառույցները: 100 տեղանոց դահլիճով գյուղական ակումբների մի այլ հաջողված տիպ է Ա.Ասատրյանի նախագիծը: Այդ տիպային օրինակով են կառուցվել Ազարակի, Ողջաբերդի, Կողեսի ակումբները և այլն: 100 տեղանոց դահլիճով ակումբների տիպաբանական կազմը լրացնում են ևս երկու նախագծային որոնումներ, որոնք հետագայում ավելացվել են Հայաստանի խնդրո առարկա շենքերի շարքում: Դրանք կողային սենյակներով դուրս ցցված և երկրորդ հարկում տեղադրված դահլիճով տարբերակի ակումբային լուծումներն են: Առաջինի լավագույն օրինակներից է ճարտարապետ Գ.Շքնավորյանի՝ Բլխեր գյուղի համար նախագծած ակումբը: Ակնարկվող լուծումը հնարավորություն է տալիս մեծացնել նախասրահը: Այստեղ դահլիճը օդափոխության և լուսավորության տեսակետից ավելի հարմար է: Երկրորդ տարբերակին է պատկանում 121 տեղանոց դահլիճով ակումբը (ճարտ.՝ Գ.Չաքիև): Առենախոսության այս մասում վերլուծությամբ ընդգրկվել է Հ.Մարգարյանի տիպային նախագիծը (1938թ.):

**բ) 200 տեղանոց դահլիճով ակումբներում**, ի տարբերություն 100 տեղանոց ակումբների, նախընտրելի են դառնում երկայնական առանցքով տեղադրված դահլիճները: 200 տեղանոց դահլիճով ակումբներից առաջինը դեռևս տավրածն է, ինչպես Բլխեր գյուղի օրինակում: Այս տիպի լավագույն օրինակներից է՝ ճարտարապետներ Ռ.Ալավերդյանի և Կ.Օհանջանյանի նախագծով Քուչակ գյուղում կառուցված ակումբը: Այլ օրինակներ են՝ Ջան ֆիդա գյուղի ակումբը, Չավեն Բախշինյանի կողմից նախագծված Վարդենիսի երկհարկ ակումբը: Խաչիկ գյուղի (ճարտարապետ Լ.Մելիք-Բաբախանյան) և Զարբայի (ճարտարապետ Մ.Ապրամյան) ակումբների օրինակներում մի նոր օրինաչափություն է նկատվում: Լայնական առանցքով տեղադրված 200 տեղանոց դահլիճի ծավալը, նախասրահը մեծացնելու նպատակով, կոնստրուկտիվորեն ներմուծում է

կենտրոնում չորս սյուներով լուծված հորինվածքը: Վերջինը ստեղծագործականորեն կազմավորում է տալիս ակումբների տաշտածև տարածական հատակագծային հորինվածքը, որի ամփջական դրսևորումներից է՝ ճարտարապետ Տ.Մարտիայանի հեղինակած ԴՎԻՆ գյուղի ակումբը: Վերջինները Խորհրդային ակումբների համար նախատեսված առաջադրանքների միանգամայն հաջողված և տեղական պայմաններին հարմարվող ճարտարապետական բարձրարվեստ լուծումներ են, որոնք հարազատ մնացին խորհրդահայ ճարտարապետությանը: Այս տիպի ակումբներից ատենախոսությունում վերլուծականորեն ներմուծվում է Վարդենիսի Նորակերտ գյուղի «Կարմիր հոկտեմբեր» ակումբը (ճարտ. Ս.Մարգարյան, 1954-1955թթ):

գ) 300 - 400 տեղանոց դահլիճով ակումբները հիմնականում կառուցվել են մեծ գյուղերում և իրենց մասշտաբային նմանություններով ճանապարհի հարթել ազգային ճարտարապետության մոտիվների ներթափանցմանը քաղաքային ակումբների ենթատեսքներում, որոնք 1920-ական թվականներին իրականացվել կամ նախագծվել են կոնստրուկտիվիստական ոճով: Եթե 100-200 մարդ տեղավորող դահլիճներով ակումբների գերակշռող մեծամասնությունը կառուցվել են 1945թ. կայացած մրցույթում ընտրված նախագծերի հիման վրա, ապա այս կարգի կառույցներում արդեն գերակշռում են անհատական նախագծերով կառուցված շենքերը: 300 և ավելի մարդ տեղանոց դահլիճներով ակումբները, որպես կանոն, բոլորն էլ ակումբային սենյակների երկհարկ դասավորություն ունեն, որը միանգամայն տրամաբանական է այս տիպի կառույցներում նշանակալից տարածություն գրավող ակումբային մասի առկայության պայմաններում:

Տվյալ տիպի ակումբները նախորդների նման բաժանվում են՝ ընդլայնական տեղադրություն ունեցող դահլիճներով և երկայնական առանցքի երկարությամբ տեղադրված դահլիճներով տարբերակների:

Ընդլայնական տեղադրված դահլիճներով ակումբները նախորդներից տարբերվում են նրանով, որ երկհարկ են և բեմական մասերով ավելի կատարյալ: Մյուս հանգամանքն, ըստ էության, վերադարձ է 1920-ական թվականների քաղաքային ակումբների տարածական լուծումներին: Դա դահլիճի ծավալային տեղադրման օրինաչափությունն է կառույցի ընդհանուր հորինվածքում, որպես հորինվածքի կենտրոն և դոմինանտ: Փաստորեն, նախորդ օրինակներում ակումբների հորինվածքային կենտրոնը նախասրահն էր, իսկ դոմինանտը՝ դահլիճը, կամ բեմական տուփը: Այսպես էր լուծված ճարտարապետ Ա.Լորդ Մուշեղյանի նախագծով կառուցված Աբարբեկյան գյուղի և այլ ակումբները: Գ.Լորդ Թամանյանի կողմից նախագծված ակումբային շենքերը բնորոշելի են ազգային կերպարի նոր մեկնաբանությամբ և պատկանելի մոնումենտալությամբ: Նրա կողմից նախագծված Ոսկեվազի ակումբում դահլիճը երկհարկ բարձրություն ունի՝ համապատասխան խորքային բեմով և այլ հարմարություններով: Նույն ճարտարապետի միևնույն տիպային սխեմայով իրականացված Բամբակշատի, Կապուտանի և Վերին Արտաշատի ակումբներում դահլիճների ինտերիերը և արտաքին ճակատային լուծումները հասցվել են կերպարային կատարելության: Փաստորեն, շենքը միաշունչ է, իսկ ծավալով ու մասշտաբով՝ միասնական: Վերջին նվաճումը առավել բարձր գեղարվեստական լուծման է հասցվել Ալափարսի ակումբի օրինակում (ճարտարապետ Ռ.Իսրայելյան), մանավանդ, որ այստեղ բեմական տուփը տեխնիկական տվյալներով համապատասխանում է բառերական բոլոր պահանջներին: Վերջին երեք տիպերի օրինակով կառուցված գյուղական մշակույթի տները կամ ակումբները կարելի է համարել ուսումնասիրվող ակումբային շենքի տիպի ոսկե շրջադարձ և մասնագիտական բարձր վերելք: Դրանց օրինակով պատրաստվեցին նույն ժամանակների քաղաքային

ակումբները՝ ստեղծելով հայկական ազգային ճարտարապետության տոհմիկ դպրոցը:

Երկայնական առանցքով տեղադրված դահլիճով ակումբային շենքերը հայկական ճարտարապետության ավանդական ըմբռնողությամբ են: Դրանցում միջնադարյան ժառանգությունը ոչ միայն ներկայանում է ծավալատարածական ձևերով, այլև ոճական առանձնահատկություններով: Վերջինների հայկական միջնադարյան ճարտարապետության առանցքային սիմետրիայի, ծավալային պլատոնականության, մասշտաբայնության և ուտիլիտար տարրերի հորինվածքային հատկանիշներով օժտված լուծումները հասցվել են պատմական խորը ըմբռնման: Փաստորեն, կոշում կառուցված ակումբը (ճարտ.՝ Ռ.Իսրայելյան) պարզ է, իր լուծումներում հստակ, և ունի աննկարագրելի արդյունավետ մասշտաբ: Համակառույցի ծավալային ձևերը անպաճույճ են և արխիտեկտոնիկ՝ առանց ավելորդությունների: Նույնը պետք է ասել ՎԱրևշատյանի կողմից նախագծված Մաստարա գյուղի ակումբային շենքի մասին: Փաստորեն, միայն 1932թ. միութենական պլենումով մեկնաբանելի չէ քաղաքային մշակույթի տների և ակումբների ճարտարապետության մեջ տեղի ունեցած ոճական շրջադարձը: Դարգապետ այն գյուղական և քաղաքային միջավայրերում տեղի գտած այս ժամանակաշրջանին բնորոշ ոճական ակտիվ ճարտարապետական գործունեության ինտեգրացման արդյունքն էր: Վերևում ներկայացված ակումբային շենքերի բարերար ազդեցությամբ ստեղծված մի շարք քաղաքային ակումբներ, ինչպես օրինակ՝ Ստեփանավանի, Աշտարակի, Էջմիածնի մշակույթի պալատները հայկական ճարտարապետության մնայուն արժեքներ են դարձել: 300 տեղանոց դահլիճով ակումբների տիպական նմուշ է ճարտարապետ Ալ.Սահիյանի կողմից նախագծած Աղավնատուն գյուղի ակումբը՝ կառուցված 1941թ.: Սույն գլխում կատարված ուսումնասիրությունը հանգում է հետևյալ եզրակացությունների.

• Հայաստանում ակումբային շենքերի և մշակույթի պալատների նախագծումը և շինարարությունը աննախադեպ վերելքի շրջան է արձանագրում 1932-1955թթ.: Երկրի կենսամակարդակի և գյուղատնտեսության զարգացման հետևանքով զգալիորեն փոխվում է տվյալ կառույցների բովանդակությունը, մեծանում են մասշտաբները և բազմաբնույթ դառնում կառույցների շահագործումը: Նշված ասպեկտներով անհրաժեշտություն է դառնում հատակագծատարածական նոր լուծումների փնտրումը, որոնք կարող են բավարարել ժամանակի գործառնական և մշակութային պահանջները: Փաստորեն, քաղաքաշինական և ճարտարապետական նախագծման շուրջ առաջացած վեճերի կապակցությամբ, 1932թ. ԽՍԿԿ հեքթական համագումարի որոշմամբ, խորհրդային ճարտարապետությունը ընթացավ կուսակցական թելադրանքով, հատկապես, ակումբային շենքերի և մշակույթի պալատների բնագավառում: Ակնարկվող շենքերում բացառվեց ժամանակակից ոգով ընթացող կոնստրուկտիվիզմը և նորարարյունը ընթացավ նոր դասականության, ազգային ոճամոտիվների և հաջորդաբար սոցոռալիզմի հակվածությամբ: Այսպիսի օրինաչափություն կա նաև տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրված հայկական ակումբային շենքերի և մշակույթի պալատների ճարտարապետության մեջ: Դրանք դրսևորվեցին նոր նախագծային հնարքներով, ծավալատարածական նորանոր արտահայտչականության տարրերով: Հատակագծային լուծումները, պահպանելով դասական համաչափությունն ու սիմետրիկությունը, միաժամանակ ազգային ըմբռնողությամբ հարստացվում էին մուսթային հանգույցների տեղադրման և սենյակների խմբավորման լուծումներով: Դիտարդահլիճների ուղղագիծ երկրաչափական ձևերը համարվում են նաև օվալաձև և սեղանաձև պարագծային

լուծումներով: Ծավալային կոմպոզիցիան հաճախ համախմբվում է ճակտոնով պսակված մուտքի և հետևաբար նախասրահի շուրջ: Շատ կոմպոզիցիաներում բավականին բազմակողմանի են լուծված ճարտարապետության հարցերը՝ կապված քաղաքաշինական անսամբլի և բնական միջավայրի հետ: Հետզհետե զարգանում է նոր ուշագրավ հատկանիշը՝ ճարտարապետության և կերպարվեստների սինթեզը, որը բխում էր ազգային և սոցիալիստական ռեալիզմի գաղափարական դիրքերից: Հաղթահարելով 1930-ական թվականների համաշխարհային և ֆակտուրալ մեթոդներով նվաճվող մոնումենտալության սահմանափակումները՝ 1940-ական թվականներին և ավելի ուշ կառուցված մի շարք մշակութային համալիրներում, օրինակ՝ Ալյոմինի գործարանի ակումբը, արվեստի սինթեզը ձեռք է բերում կերպարվեստի ակտիվ ներգրավումով, այդ թվում՝ քանդակներ, բարձրաքանդակներ, խճանկարներ ու նրմանակարներ և այլն: Դրանք մոնումենտալ պրոպագանդայի և ազիտ պրոպի նոր դրսևորում են, որոնք, ի տարբերություն խորհրդային մյուս դպրոցների, հայկական օրինակներում ավանդական և բնաշխարհիկ ինքնատիպություն ունեցան: Սա անդրադարձ էր հայկական ճարտարապետության թանանյանական ազգային նոր դպրոցին:

• Դեռևս, մինչև պատերազմի վերջանալը և առաջին հետպատերազմյան տարիները, ընդլայնվում է մշակույթի օբյեկտների նախագծումը: Այս երևույթը առաջին հերթին նկատվում է կոլտնտեսություններում, որտեղ ծավալվում է ակումբների շինարարությունը: Խնդրո առարկա շենքերի շինարարությունը կանոնակարգելու համար հայտարարվում են կոլտնտեսական ակումբային շենքերի նախագծային մրցույթներ: Մշակվում են ակումբային շենքերի մի քանի տիպեր՝ 100, 200 և 300 տեղանոց հանդիսատեսային դահլիճներով նախագծեր (ճարտ.՝ Օ.Մարգարյան, Ն.Բաշբեյկ, Ռ.Խարայեյան, Գ.Մուշեղյան, Ա.Ասատրյան, Ռ.Արբերտյան, Գ.Թամանյան, Ա.Սահինյան և ուրիշներ): Այս ժամանակներում անմախաղէպ վերելք սալրած կոլտնտեսական ակումբների գլխավոր առանձնահատկություններից են՝ հատակագծային լուծումների հավաքությունը, գործառնական պրոցեսների մտածված կազմակերպումը, կոնստրուկտիվ տարրերի պարզությունը: Հորինվածքային լուծումները զուսպ են և խիստ սինետրիկ: Գլխավոր ճակատների զեղարվեստական զարդարանքը դառնում է սկզբունքային: Առանձին նախագծերի ստեղծագործական անհաջողություններից անկախ՝ կոլտնտեսային ակումբների ճարտարապետությունը ընդհանուր առմամբ կարելի է դասել սովետական տարիների կարևոր գյուղատնտեսության շարքում: Մինչդեռ, հետպատերազմյան տարիներին կառուցված քաղաքային ակումբային շենքերում և մշակույթի պալատներում նկատելի են նախագծային առաջադրանքների համատարած խախտումներ: 1945-1955թթ. ընթացքում նախագծերի իրականացման գործնառնում կորում է միաշնչությունը, սենյակների կազմը և մակերեսները պատճառաբանված չեն, դիտադահլիճային մասի և ակումբային սենյակների միջև գործառնական կապերը տեղայնացում են և շատ դեպքերում մեկուսացվում: Ակնհայտ է առաջին մասի ծավալի մեծացումը երկրորդի հաշվին: Ակումբային մասի կազմից կրճատվել են մի շարք՝ մշակութային դաստիարակման աշխատանքների կազմակերպման համար նախատեսված, տարածքներ: Նկատելիորեն զգացվում է ակումբ հասկացողության վերափոխումը, որպես ինչ-որ ձեռնարկության մշակութային կյանքի կազմակերպող կառույց և ոչ թե ժողովրդական դաստիարակչական կենտրոն և այլն:

• Կարևոր հանգամանք կարելի է համարել այս շրջանում ազգային ոգով ծավալված գյուղական ակումբների զարգացումը, որոնք իրենց ընթացքով բարեփոխում են քաղաքային ակումբների ճարտարապետական ոճը: Ի տարբերություն քաղաքային ակումբների, գյուղական ակումբները դառնում են

բնակավայրերի դոմինանտները և տեղադրվում՝ գլխավոր առանցքի՝ հրապարակների վրա: Կան նաև օրինակներ, որտեղ ակումբները տեղադրվել են առանձնացված հողամասերի, կամ հենց կարմիր գծի վրա:

• Անտիկ սխեմայի և միջնադարյան մոտիվների համադրությամբ իրականացված ակումբային շենքերը ստեղծագործական նոր ոգի մտցրեցին հայկական խորհրդահայ ճարտարապետության մեջ: Այս շրջանի ճարտարապետները, իրենց ստեղծագործական ներշնչման ակունքներով, ինքնատիպ են և իրարից՝ տարբեր: Համաշխարհային ճարտարապետության դասական և ռեմենսանյան (Չ.Բաշխինյան), հայկական միջնադարյան (Ռ.Խարայեյան) մոտիվներից բացի, վերջինները աղերսներ են ստեղծում հայկական ժողովրդական վաղ քրիստոնեական ճարտարապետության ստերիոտիպերում (Ս.Մանուկյան, Ալ.Սահինյան և այլն):

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԽՈՐՀՐԴԱՎԱՅ ՍԿՈՒՄԲԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅՑԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1955-1991թթ.**

Ակումբային շենքերն ու մշակույթի պալատները տվյալ ժամանակաշրջանում, մնալով ազգային, ձևափոխվում են արդիականության ժամանակակից ստեղծագործական նվաճումների: Տվյալ հարցի վերլուծության կապակցությամբ հաջորդաբար ուսումնասիրվում են հետևյալ համակառույցները: Քաղաքային ակումբային շենքերից և մշակույթի պալատներից են՝ Կիրովի անվան գործարանի ակումբը (ճարտ.՝ Ռ.Ալավերդյան, Ռ.Խարայեյան, Երևան, 1958թ.), Հայլեկեկոբգործարանի ակումբը (ճարտ.՝ Ռ.Խարայեյան, Ռ.Ալավերդյան, Ա.Խանամիրյան, Երևան, 1956թ.), Երկաթուղայինների մշակույթի պալատը (ճարտ.՝ Ս.Գուրգաղյան, Մ.Մանվելյան, Երևան, 1961-1965թթ.), Արժյան քաղաքի մշակույթի պալատը (ճարտ.՝ Լ.Չերկեզյան, 1980թ.), Կապան գյուղի Լեոնազորների մշակույթի պալատը (ճարտ.՝ Ս.Գուրգաղյան, Կ.Կ.Մատինյան, Մ.Գ.Մուրազ, 1965-1968թթ.), Արտաշատ քաղաքի մշակույթի պալատը (ճարտ.՝ Մ.Ա.Սահակյան, 1967թ.), Գիլիջանի մշակույթի պալատը (ճարտ.՝ Ս.Ավետիսյան, Խ.Վետիշյան, 1967թ.), Նոյեմբերյան քաղաքի մշակույթի պալատը (ճարտ.՝ Ժ.Սարգսյան, 1967թթ.), Սևանի մշակույթի պալատը (Մ.Սիքայեյան, Չ.Սիմոնյան, 1969-1974թթ.), Եղեգնաձորի 600 տեղանոց մշակույթի պալատը, Գորիսի մշակույթի պալատը (ճարտ.՝ Ս.Գուրգաղյան, 1970-1976թթ.), Իջևան քաղաքի Բենտոնիտ գործարանի ակումբը (ճարտ.՝ Գ.Թամանյան, 1976-1977թթ.): Նշվածների շարքում են նաև «պրոֆեսիոնալ» ստեղծագործական ընկերությունների կենտրոնները, որոնցից ներկայացվում են միայն երկու համալիրներ՝ Երևանի Կինոյի տունը (ճարտ.՝ Ս.Սաֆարյան, 1968-1975թթ.) և Խուլ-համրերի միավորման ակումբը (ճարտ., 1973-1983թթ.): Գյուղական ակումբային շենքերից և մշակույթի պալատներից ատենախոսությունում ընդգրկվել են՝ Էջմիածնի Արշալույս գյուղի 500 տեղանոց ակումբը (ճարտ.՝ Լ.Ասլանյան, 1955-1956թթ.), Էջմիածնի Հայթաղ գյուղի 450 տեղանոց Ակումբ-գրասենյակ (ճարտ.՝ Ա.Նալբանդյան, 1956թ.), Ազարակ գյուղի համար նախատեսված 300 տեղանոց դահլիճով ամառային ակումբը (ճարտ.՝ Մ.Կմետեղյան, 1956թ.), Ճարտար գյուղի և Մարտունու շրջկենտրոնի ակումբները (ճարտ.՝ Գ.Թամանյան, ԼՂՀ, 1957-1958թթ. և 1966թ.), Վարդենիսի շրջանի Ակումբ գյուղի ակումբը (ճարտ.՝ Ս.Ումեղյան, 1967թ.), Արտաշատի Գետազատ գյուղի 300 տեղանոց ակումբը (ճարտ.՝ Լ.Մ.Բաբայան, 1971-1985թթ.), Բարսեղյան շրջկենտրոնի Մշակույթի պալատը (ճարտ.՝ Ա.Բաղդասարյան և Ա.Խալաթյան, 1986թ.): 1970-ական թվականներին իրենց վերջնական ձևավորումը ստացան նաև ակումբային շենքերի և մշակույթի

պալատների տիպային սկզբունքները: Այդ համակարգված նախագծերի թվում են՝ 300 տեղանոց դահլիճով մշակույթի պալատի տիպային նախագիծը (ճարտ.՝ Լ.Բաբայան, Գ.Մխիթարյան, 1971թ.), 400 տեղանոց դահլիճով մշակույթի պալատի տիպային նախագիծը (ճարտ.՝ Լ.Ներսիսյան), 500 տեղանոց դահլիճով մշակույթի պալատի տիպային նախագիծը (ճարտ.՝ Լ.Բաբայան, Գ.Մխիթարյան, 1973թ.), 600 տեղանոց դահլիճով մշակույթի պալատի տիպային նախագիծը (ճարտ.՝ Մ.Միքայելյան և Ջ.Սիմոնյան), 700 տեղանոց դահլիճով շրջանային մշակույթի պալատի տիպային նախագիծը (ճարտ.՝ Ս.Բաղդասարյան, Ս.Լազարյան, 1973թ.) և այլն: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա առաջացել են հետևյալ եզրակացությունները. 1956թ. սկսած խորհրդահայ ակումբային շենքերը և մշակույթի պալատները մեծ զարգացում ապրեցին: Եթե 1932-1955թթ. հիմնական շենքը գյուղական ակումբների դերի բարձրացումն էր և դրանց բարերար ազդեցությունը քաղաքայինների վերափոխման վրա, ապա 1955-1991թթ. տեղի ունեցավ հակառակ՝ զարգացան քաղաքային մշակույթի ակումբները և իրենց բարերար ազդեցությունը ունեցան փոքր քաղաքների և գյուղական մշակույթի տների վերափոխման վրա:

Կան նաև հետ խորհրդային տարիներում նախագծված մշակույթի պալատներ, որոնք իրենց բովանդակությամբ և ծավալատարածական հորինվածքով դեռևս կրկնում են խորհրդահայ ժամանակների լուծումները: Դրանցից հատկապես նշելի են՝ Սպիտակ քաղաքի մշակույթի պալատը (ճարտ.՝ Հ.Գասպարյան, 1990-ական թվականներ), ԼՂՀ Նորագյուղ գյուղի համար մշակույթի պալատի նախագիծը (ճարտ.՝ Ռ.Ջուլիակյան, Հ.Գրիգորյան և Տ.Բարսեղյան):

Տիպաբանականորեն ձևավորվեցին ակումբների զանազան մասնագիտական նոր տեսակներ, հատկապես դրանցից նշելի են «պրոֆեսիոնալ» կազմակերպությունների կենտրոնները: Այս ժամանակաշրջանի ակնհայտ երևույթներից է տեղական տիպային նախագծերի բնագավառի զարգացումը և ինտեգրացումը:

Հորինվածքային առումով կարևոր նշանակություն ունեցավ մեծ դահլիճներով մշակույթի կենտրոնների տարածումը: Դրանք իրենց հեքին ստեղծեցին բակային հորինվածքով մշակութային հիմնարկներ, որոնք, ըստ Հայաստանի կլիմայական գոտևորման, դրսևորվեցին հորինվածքային զանազան հետաքրքիր առանձնահատկություններով՝ հրապարակաձև, կիսապարփակ բակով և բակավոր լուծումներով համալիրների:

Կոնստրուկտիվ խնդիրներում ոճական նոր միտումները ակումբային շենքերի և մշակույթի պալատների շինարարության ոլորտները ներգրավեցին զանազան նոր տեխնոլոգիաներ: Տիպային նախագծումը նաև տվյալ բնագավառում զարգացավ պանելային ճարտարապետության ներգրավման ուղղությամբ:

Ստեղծվեց հայկական ժամանակակից ոճն արտահայտող ճարտարապետական դպրոցը: Այստեղ շենքերի կերպարները ստեղծվեցին ոչ թե միջնադարյան ճարտարապետական տարրերի ներգրավմամբ, այլ կատարվեց ստեղծագործաբար զարգացում: Պատմականության կերպարը հարստացվեց մասնագիտական ներդաշնակեցման մեթոդով: Կառուցված շենքերում լայն տարածում ունեն ազգային ըմբռնողությամբ կատարված ռացիոնալիստական, միմիանալիստական և ազգային արտահայտչապաշտ լուծումները:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակումբային շենքերը, ունենալով հին անցյալ, սոցիալիստական (այդ թվում և խորհրդահայ) իրականությունում զարգացան նոր բովանդակությամբ: «Ազիտ պրոպի» գաղափարներով դրանք դարձան դիտադահլիճային կորիզով ժողովրդական կենտրոններ և հաջողաբար վերածեցին իսկական հասարակական մշակութային համակառույցների: Բովանդակ շենքերի տեսակներն են՝ զանազան տարողության դիտադահլիճները, սպորտային բաց և ծածկված սրահները, բազմազան բնույթի ակումբային, խմբակային սենյակները, գրադարանները, հանգստի կազմակերպման ծառայությունները՝ սրճարաններ, ճաշարան և նախասրահն ու իր հարակից հարմարությունները: Խորհրդային ակումբները, սկզբում՝ 1920-ական թվականներին, լինելով պարզազույն համալիրներ, աստիճանաբար տիպավորվել են քաղաքայինի և կոլտնտեսականի, որոնք էլ 1925թ. կես զարգացել են տիպային որոնումներով: Վերջինները խորհրդահայ իրականությունում իրենց իրական դրսևորումն են գտնում հիմնականում 1940-ական թվականներին և զարգացում ապրում հաջորդ տասնամյակներում: Քաղաքային ակումբները, տիպային նախագծման սկզբունքներից ելնելով, ամբողջապես դրսևորվում են 1970-ական թվականներին: Բացի նշվածներից, 1920-32թթ. կառուցված ակումբային շենքերը կամ գործարաններին կից (Գյումրիի Սոյանի անվան, հայտեքստիլ ֆաբրիկայի, «Պիշչեվկուս» միության ակումբները), կամ պրոֆեսիոնալ ընկերությունների կենտրոններ էին (Կոմունարների և շինարարների ակումբները): 1932-1955թթ. դրանք դրսևորվում են որպես կուսակցական կենտրոն-ակումբներ (Էջմիածնի Հայթաղ գյուղի և Վարդենիսի Կարմիր Հոկտեմբեր ակումբները) և հասկանալի մշակույթի կենտրոններ, այդ թվում և թատերական շենքերի մի տիպի՝ թատրոն-ակումբների (Աշտարակի, Կապանի լեռնագործների ակումբները, Գյումրիի Հայտեքստիլ ակումբը՝ ճարտարապետ Գ.Քոչարի տարբերակը, Հրազդան քաղաքի Հիդրոշինարարների ակումբը, Ստեփանավանի մշակույթի պալատը և այլն), տեսքով: Սկսած 1956թ. և մյուս տասնամյակներում ակումբային շենքերն ու մշակույթի պալատները ի հավելումն նախորդ տարբերակներին արտահայտվել են որպես բազմաբնույթ պրոֆեսիոնալ հայացքներով (բնագծման քանակական արվեստների երանգներով) հասարակական մշակութային համակառույցներ, իրենց ստեղծագործական հետաքրքիր ու անկրկնելի լուծումներով (ԼՂՀ Ճարտար գյուղի և Մարտունու շրջանի, Բաղրամյան շրջկենտրոնի ակումբները, Երկաթուղայինների մշակույթի պալատը Երևանում, Կինոյի տունը Երևանում, Արովյան քաղաքի մշակույթի պալատը, ինչպես նաև նախագծային վիճակում մնացած Նոյեմբերյանի ու Ազարակի մշակույթի պալատները): Պետք է ասել, որ խորհրդահայ ակումբային շենքերն ու մշակույթի պալատները դիտադահլիճային և թատերական շենքերի շարունակությունն են և հայ ժողովրդի նախափորված վայրերից մեկը: 1920-1932թթ. ակումբները միջին չափսի համակառույցներ են, որոնցում կան դահլիճի օպտիմալ տեղադրության զանազան որոնումներ (երկայնական, լայնական, առանձնացված շենքով և այլն): 1932-1955թթ. ակումբները իրենց գործառնական լուծումներով ավելի ռացիոնալ են: Դրանցից փոքրերն ունեն դահլիճների ընդլայնական տեղադրություն (Ալփարս, Ոսկեվազ, Բամբակաշատ, Կապուտան Խաչիկ, Վերին Սասունաշեն և այլ գյուղերի), միջինը, միջին և մեծ տարբերակները՝ երկայնական (Աղավնատուն, Ջանֆիդա, Մաստարա, Կոչ, Քուչակ գյուղերի, Հրազդան քաղաքի Հիդրոշինարարների, Երևանի Կանաչ գործարանի, Իջևան քաղաքի և այլ ակումբներ): Վերջին սկզբունքը ավելի է բյուրեղանում 1956թ. հետո կառուցված ակումբներում: Դրանք

առանց բացառության մեծ համալիրներ են՝ ճարտարապետական կատարյալ լուծումներով:

Ըստ քաղաքաշինական տեղադրության, ակումբային շենքերն ու մշակույթի պալատները գյուղական և քաղաքային միջավայրերում իրարից տարբեր են: Փաստորեն, գյուղական ակումբային շենքերն ու մշակույթի պալատները բնակավայրային դոմինանտներ են և սոցիալական կարևորագույն օղակներ: Այդ պատճառով էլ դրանք հիմնականում տեղադրվում էին հրապարակների անասնոցում: Քաղաքային կյանքում խնդրա առարկա շենքերը տարածքային կամ կոլեկտիվային նշանակության կենտրոններ են և չունեն համաքաղաքային նշանակություն: Դրանք լավագույն դեպքում քաղաքային այգու, պողոտաների կարմիր գծի կամ ինքնուրույն հողամասով կազմակերպված միավորներ են: Կան նաև ակումբներ, որոնք տեղադրվել են հենց գործարանի տարածքում: Այս առումով զատորոշելի են միադահլիճ և բազմադահլիճ մշակույթի կենտրոնները: Վերջինները Հայաստանում հազվագյուտ են և առավելագույնը՝ երկդահլիճ (Երևանի երկաթուղայինների մշակույթի պալատը, Նոյնմբերյանի համար նախագծված մշակույթի պալատը, Բաղրամյանի մշակույթի պալատը և այլն):

Խորհրդահայ ակումբներում և մշակույթի պալատներում եղած շենքերի տեսակները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով:

Դահլիճներն ակումբային շենքերի և մշակույթի պալատների կազմում հիմնականում ունիվերսալ բնույթի են, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել զանազան բնույթի միջոցառումներ: Խորհրդահայ ակումբները նույնպես այդպիսին են, սակայն ժողովրդի քատերական նախասիրությունների ֆոնի վրա դրանցից շատերը դարձել են քատերական փոքր օղակներ՝ արհեստավարժ հնարավորություններով ոչ պակաս, քան մասնագիտական քատրոնները: Դրանցում դիտարկահիճը տատանվում է 100-800 և հազվագյուտ դեպքերում (զարգացման ժամանակաշրջանում) 900 տարողությամբ: Դիտարկահիճի նորմերը մեկ մարդու համար 0.5-0.6քմ է, իսկ ծավալը՝ 5լսմ: Համապատասխանաբար դահլիճների տարածում գտած չափերն են՝ 9x16մ, 12x24մ, 15x30մ, 18x36մ: Հավաքության ցուցանիշներից բեկադրված՝ ակումբային շենքերը կորվածքով լուծվել են փոքր դահլիճների օրինակով՝ միասնական հատակի կառուցվածքով (Գետազատի, Աղավնատուն գյուղի, Սեռյանի անվան, Քանաքեռ-Հեյ-Կի, Ալավերդու պղնձի գործարանի, Տավուշի և այլ ակումբներ), միջին տարողության դեպքում դրանք մուտքերով զետեղվել են երկու մակարդակների վրա և դահլիճում՝ բաժանվել պարտերային ու ամֆիթատրոնային մասերի, կամ առհասարակ միայն ամֆիթատրոնային տեղերի (Արվյանի, Իջևանի Բենտոնիտ գործարանի, Երևանի երկաթուղայինների մշակույթի պալատների մեծ դահլիճը և այլն): Ավելի մեծ օրինակներում նախորդ կառուցվածքին ավելացվել են պատշգամբային հարկը (Հայրաթի, Կիրովի գործարանի, Բաղրամյան շրջկենտրոնի, Աշտարակի, Կապանի Լեռնագործերի և այլ ակումբներում) և երրորդ հարկի մակարդակով տրվող յարուսները կամ օբյակները (Մարտունու, Շարտարի, Հայլեկտրո գործարանի, Երևանի խուլ-համրերի միավորման և այլ ակումբներում): Դիտարկահիճների հատակագծային հորինվածքը սովորաբար ուղղանկյուն է, իսկ հազվագյուտ դեպքերում լուծված է կորագծային եղանակով (օրինակ՝ Շարտար գյուղի, Մարտունու, Հրազդանի հիդրոէլեկտրակայանի մշակույթի պալատները):

Դահլիճների բեմական մասը հիմնականում միջին չափի բեմական տուփ ունեցող խորքային տարբերակի է, որն իր պարագծով դասավորված օժանդակ սենյակներ ունի: Շատ օրինակներում հանդիպում է առաջնաբեմով անցնող օրկեստրանների առկայությունը: Այս բոլորի հետ կան նաև սովորական բեմահարթակներ՝ առանց բեմական տուփի առկայության, որոնցում բեմաճաղերը

պակատային հավաքվող և հորիզոնական շարժում ունեցող տարբերակի են: Հայկական մշակույթի պալատների մեծամասնությունը բեմական մասերով հարմարեցված են լայնեկրան ֆիլմերի ցուցադրության համար: Հազվագյուտ օրինակներում հանդիպում են բացօթյա բեմ ունեցող ակումբներ ևս, ինչպես ճարտարապետ Կոնտեյնյանի կողմից նախագծված Ազարակ գյուղի, այնպես էլ՝ Ալ.Սահինյանի Աղավնատուն գյուղի ակումբների դահլիճների օրինակում և այլն: Մեքենայացման տեսակետից վերելակների օգտագործումը սահմանափակ է, սակայն բեմատակի (տրյունային) 5մ տրամագիծ ունեցող անիվային մեքենայացումը լայն տարածում ունի: Բեմական չափերը հիմնականում հանդիպում են հետևյալ տարբերակներով՝ 1) 18մ լայնությամբ և 15մ խորությամբ, բեմական պորտալի բացվածքը 14մ և բարձրությունը 10մ, 2) 14մ լայնությամբ և 11մ խորությամբ, բեմական պորտալի բացվածքը 12մ և բարձրությունը 9մ, 3) 12մ լայնությամբ և 8մ խորությամբ, բեմական պորտալի բացվածքը 9մ և բարձրությունը 6-7մ և այլն:

Սպորտային մասերը սովորաբար բովանդակում են 12x24մ, 15x30մ, 18x36մ չափերով մարզական բազմաբնույթ միավորներ՝ իրենց օժանդակ տարածքների հետ համատեղ: Վերջինները սովորաբար լուծվել են երկհարկ: Որոշ օրինակներում նախատեսվել են փոքր չափի ֆուտբոլային միջուկներ, ինչպես նաև կա ծածկած լողավազան (օրինակ՝ Արվյանի մշակույթի պալատի դեպքում):

Նախասրահները և օժանդակ տարածքները, այդ թվում՝ ճաշարանն ու սրճարանային սպասարկումները, ճեմասրահները և այլն, սովորաբար նախագծվել են միասնական: Դրանցում կան ձմեռային այգու մի քանի միջավայրային լուծումներ ևս: Ճեմասրահները միջանցքատիպ են, սննդի օգտագործման տարածքները՝ բազմանպատակ և փոքր: Նախասրահները ընդհանուր առմամբ (դահլիճի տարողությանը համապատասխան) ունեն 150-500քմ մակերես:

Ակումբային մասերը և կոնֆերանսային դահլիճները, սովորաբար միասնական են և ծավալվում են դիտարկահիճի ու նախասրահի շուրջ: Դրանք ունեն սրահատիպ հորինվածք և 2-4 հարկանի են: Ակումբային մասի խմբակային սենյակների հետ հաճախակի են գրադարանային մասերը, որոնք էլ պատկանում են գրադարան- ընթերցասրահ տարբերակին:

Հորինվածքային առումով խորհրդահայ ակումբային շենքերն ու մշակույթի պալատները, պատկանելով խորհրդային նույնատիպ շենքերի ծավալատարածական լուծումներին, ունեն որոշ տեղական նախասիրություններ: Նախասրահային մասերում ներդաշնակեցման միջոցները օրինաչափորեն հորինվածքի կենտրոնն են: Շատ դեպքերում դրանք նույնանում են դահլիճի տարածքի հետ: Դոմինանտը հորինվածքի կենտրոնի հետ հորիզոնական, ուղղաձիգ կամ անկյունագծային հարաբերությամբ է: Դոմինանտն ընդգծվում է զանգվածի մեծացման մեթոդով: Առանցքայնությունը հիմնականում նախասրահից դեպի բեմական տուփ ուղղությամբ է, սակայն միջավայրի հետ ներդաշնակեցնելու նպատակով նաև զանազան լուծումներ կան: Այնուամենայնիվ դրանցում առանցքների հանգույցը մնում է դոմինանտի և հորինվածքի երկրաչափական կենտրոններում:

Խորհրդահայ ակումբային շենքերն ու մշակույթի պալատները դասակարգվում են հիմնականում դահլիճի ծավալատարածական դիրքով կամ վերջինի և մյուս մասերի հարաբերությամբ: Այստեղ էական է դահլիճի մեծությունը, որը սովորաբար ուղիղ համեմատական կարգով կապված է համալիրի չափերի հետ: Այսպես, խորհրդահայ ճարտարապետության զարգացման երեք փուլերում նկատվող ակումբային շենքերի ու մշակույթի պալատների աստիճանական մեծացումը նույնատիպ անցում է կատարում ուղղանկյուն հատակագծային լուծումից դեպի

անկյունարդած (Գորիսի Մշակույթի պալատը, 500 տեղանոց տիպային նախագիծը, Գյումրիի հայտնեքստիլ ֆաբրիկայի ակումբը և այլն), տավրած (Ազատ գյուղի ակումբը) և տաշտած (Արտաշատի մշակույթի պալատը, Երևանի երկաթուղայինների մշակույթի պալատը և այլն) ծավալատարածական սխեմաները: Հավաք լուծումներում զանազանվում են լայնական առանցքով տեղադրված դահլիճները (Հայթաղ գյուղի ակումբը, Ֆոնտան գյուղի ակումբը, Վերին Սասունաշենի, Ագարակի Բամբակաշատի և այլ ակումբներ) և երկայնական առանցքով տեղադրված դահլիճները (Աղավառուս գյուղի ակումբը, Դիլիջանի մշակույթի պալատը, Խուլ-համրերի միության ակումբը, Մաստարայի ակումբը, Աշտարակի քաղաք-մշակույթի պալատը, Բաղրամյանի մշակույթի պալատը, Կիրովի գործարանի մշակույթի պալատը, Արմավիրի մարզի Արշալույս գյուղի ակումբը, Իջևանի Բենտոնիտ գործարանի ակումբը, Սեդյանի անվան ակումբը, Վանաձորի քիմիական գործարանի ակումբը, Կոչ գյուղի, Քուչակ գյուղի և այլ ակումբներ): Խորհրդահայ ճարտարապետության զարգացման փուլում անհախադեպ տարածում են գտնում նաև բակային ծավալատարածական հորինվածքները (Արովյանի, Կապանի լեռնագործների, Սևանի մշակույթի պալատները, Երևանի Կինոյի տունը, 700 տեղանոց դահլիճով տիպային նախագիծը): Ինչպես ցույց են տալիս ցուցակագրական ուսումնասիրությունները, խորհրդահայ ակումբներն ու մշակույթի պալատները հիմնականում երկայնական առանցքով տեղադրված դահլիճով և բակած հորինվածքով են:

Ծավալային առումով խորհրդահայ ակումբները ռացիոնալ են: Դրանք երկրաչափական բարդ ծավալային և տարածական հորինվածքներ չունեն: Ծայրահեղ դեպքում հորինվածքի կազմում առանձնանում է բեմական տուփը: Տարածական խնդիրներում հաճախակի են լոջաների ձևով ներկայացված կամարասրահները և մուտքային նարտեքստիպ լուծումները: Նախասրահներում և նախամուտքերում հաճախակի են ավանդական ներդաշնակեցման և ռելիվայային սկզբունքով վերակոչված հայկական միջնադարյան ճարտարապետության լուծումները:

Հորինվածքային տեսակետից խորհրդահայ ակումբային շենքերը և մշակույթի պալատները զուգահեռանիստ կամ ուղղանկյունաձև են: Վերջինների մակերևույթների պլաստիկան նվաճվել է լույսաստվերային և ֆակտուրալ համադրումներով՝ ճակատայնության սկզբունքով: Արվեստների սինթեզը նախասիրված է քանդակների, հարթաքանդակների, ինտերիերներում կատարված որմնակարների ձևով, որն աստիճանաբար ընդգծված սկզբունքայնություն է ստանում, հատկապես, Խորհրդային Միության վերջին տասնամյակներում: Գունային լուծումը և շինանյութը քարի արտահատկանության տեստուրալ մեթոդով է: Հորինվածքային օրինաչափությունները հիմնականում հորիզոնական և ուղղահիվ մետրիկ մասնահատման սկզբունքով են: Չանգվածն ու դինամիկան հարմարվում են միջավայրին և ծառայում՝ քարի ճարտարապետության կերպարի ընդգծմանը: Մասշտաբայնության բոլոր ժամանակների խնդր առարկա համակառույցները հերոսական են, որը նվաճվել է մեր շինանյութի ֆակտուրալ լուծումներով, մերք հայկական դպրոցին բնորոշ հարդարանքների ընդգծմամբ: Խորհրդահայ ակումբային շենքերն ու մշակույթի պալատները Խորհրդային Հայաստանի ճարտարապետության ոճական սկզբունքային դրսևորում ունեն: Դրանք հիմնադրման ժամանակաշրջանում գերակշռող մասով կոնստրուկտիվիստական լուծում ունեն, մի հանգամանք, որ ազդված էր խորհրդային ճարտարապետության հակումներով: 1932թ. ԽՍՀՄ հերթական համագումարին հաջորդող տարիներում մեծ ալիք ծավալեց բանաշխանական դպրոցին համակիր սերնդի կողմից, որ բնորոշելի է որպես նոր դասականության և

ազգային ճարտարապետության համադրմամբ: Սա ազգային ռոմանտիզմի ու պատմական զարթոնքի հետաքրքիր օրինակ է համաշխարհային ճարտարապետության էջերում: 1960-ական թվականներից սկսած, ազգային ռոմանտիզմը աստիճանաբար գնում է դեպի լակոնիկ լուծումների և հաջորդաբար զարգանում է հայկական ազգային նոր դպրոցը, որն իր հակումներով որոշ օրինակներում մոդեռնիստական է, որոշներում՝ հիմնականում ռացիոնալիստական, կան նաև ազգային արտահայտչապաշտության ստեղծված օրինակներ:

#### Ատենայնության հրատարակությունները

1. Ռաֆայելյան Դ., Տրանսֆորմացիայի միջոցները արդի ճարտարապետության մեջ, ԵՐՃՇԴՀ-ի «Գիտական աշխատությունների ժողովածու» հ. 1 Երևան, 2003, էջ 75-77:
2. Ռաֆայելյան Դ., Խորհրդահայ ակումբային շենքերի և մշակույթի պալատների ցանկավորումը ըստ հրատարակությունների և ՀՀ գիտատեխնիկական արխիվի նյութերի, ԵՐՃՇԴՀ-ի «Գիտական աշխատությունների ժողովածու» հ. 1 Երևան, 2004, էջ 19-21:
3. Ռաֆայելյան Դ., Գործարաններին կից մշակույթի տների ճարտարապետությունը (երկաթուղայինների ակումբային շենքերի՝ Երևանի և Գյումրիի երկաթուղային կայարանների մշակույթի պալատների օրինակներով), ԵՐՃՇԴՀ-ի «Գիտական աշխատությունների ժողովածու» հ. 1 Երևան, 2004, էջ 22-24:

Архитектурное наследие клубных зданий и дворцов культуры Советской  
Армении

Клубные здания и дворцы культуры в советской действительности получили принципиально новое проявление. По своей форме и сущности они отличаются от международных примеров. Предмет исследования в диссертации изучен с точек зрения историко-архитектурных, типовых, композиционных, образно-стилистических особенностей. Изучаемые здания являются одним из главных достижений современной армянской архитектуры, однако до сих пор они не исследовались целиком и не систематизировались. В связи с этим главной научной проблемой были составление целостных списков клубных зданий и дворцов культуры, их типизация и документально-аналитическое изучение на основе периодизации советской архитектуры. В диссертации клубные здания и дворцы культуры рассмотрены в соответствии с хронологической периодизацией развития архитектуры 1920-32, 1932-55, 1955-91 гг. Советской Армении. Изучаемые здания первого периода экспериментальны по своим планировочно-функциональным решениям. В них доминируют особенности конструктивизма. Несмотря на то, что построенных комплексов этого периода мало, они являются постаментом данного наследия. Второй период для клубных зданий и дворцов культуры – время архитектурного расцвета. Они развивались на принципах местного и мирового исторического наследия. Все известные примеры этого периода по своим объемно-пространственным закономерностям классические. В то же время с помощью средств и признаков гармонизации сооружения обрабатывались под благоприятным воздействием средневековой армянской архитектуры. Особенно четко прослеживается влияние таманянской творческой школы 1920-30-х годов на возрождение армянского национального зодчества. Изучаемые здания в третьем периоде по своим объемно-пространственным композициям развивались в сторону рационалистических решений, они композиционно лаконичны и одновременно функциональны. Что касается разработки фасадов и объемов этих зданий, монументальность в них, вместо применения орнаментации, достигнута соразмерностью и брутальной выразительностью форм и используемых строительных материалов. В заключении диссертации клубные здания и дворцы культуры Советской Армении систематизированы по функционально-планировочным решениям, объемно-пространственным композиционным видам и по типам клубных зданий. В диссертации особое внимание уделено проблемам стилиобразования изучаемых зданий.

Основная новизна диссертации – комплексное исследование, документирование, систематизация, профессиональный анализ и интерпретация архитектуры клубных зданий и дворцов культуры 1920-1991 гг. Метод исследования опирается на теоретическую типизацию и каталогизацию списков изучаемых зданий, с выбором значимых примеров из полученных вариантов, а также на документально-фотографическое изучение. В диссертации использован аналитический метод в исторической последовательности, методическая система “структурного анализа” – в объемно-пространственной интерпретации формообразующих принципов.

05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1762999

